



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. օգոստոսին /վերլուծություն/

2009թ. օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12858 գործարքներ, որոնց քանակը 2008թ. օգոստոսի համեմատ նվազել է 1.6%-ով, իսկ 2009թ. հուլիսի համեմատ՝ 8.5%-ով:

2009թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3592 օտարման գործարքների 79.2%-ը կազմել են առուվաճառքները, 19.6%-ը՝ նվիրատվությունները և 1.2%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. օգոստոսին, 2009թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 4.4%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ՝ 18.9%-ով:

2009թ. օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. օգոստոսին, 2009թ. հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.6%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ աճել՝ 21.4%-ով:

2009թ. օգոստոսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	օգոստոս 2008թ.	օգոստոս 2009թ.	հուլիս 2009թ.
Կենտրոն	483600	448700	453500
Արաբկիր	412300	342000	346800
Քանաքեռ-Զեյթուն	308400	264900	268300
Նոր-Նորք	278100	214200	217500
Ավան	271100	220000	220700
Էրեբունի	275000	236600	240400
Շենգավիթ	284500	227600	232300
Դավթաշեն	297700	250600	248100
Աջափնյակ	278000	227200	230400
Մալաթիա-Սեբաստիա	265400	214800	213600
Նուբարաշեն	155100	137900	136200
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	300800	253100	255300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. օգոստոսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հուլիսի համեմատ նվազել են 0.9%-ով:

2009թ. օգոստոսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 345 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. հուլիսի համեմատ աճել է 3.9%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 6.3%-ով:

2009թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		օգոստոս 2008թ.	օգոստոս 2009թ.	հուլիս 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	140000	136400	131200
	Ապարան	35000	44200	43600
	Թալին	44800	48000	47400
Արարատ	Արտաշատ	107400	87500	84400
	Մասիս	132500	113700	115900

	Վեդի	83000	87600	86700
	Արարատ	64300	83300	86500
Արմավիր	Վաղարշապատ	171300	155700	161200
	Արմավիր	128200	110000	112800
	Մեծամոր	85900	79500	77300
Գեղարքունիք	Սևան	100900	87000	83600
	Գավառ	49900	42900	44400
	Մարտունի	68900	80400	81300
	Վարդենիս	32800	32500	33600
	Ճամբարակ	16400	19200	19200
Լոռի	Վանաձոր	101800	91600	90200
	Ստեփանավան	47600	54000	54300
	Սպիտակ	62600	73900	75100
	Ալավերդի	32500	31400	32500
	Տաշիր	32800	34900	35200
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	13900	13900
Կոտայք	Աբովյան	177000	138600	139600
	Նոր Հաճն	132300	128800	133300
	Բյուրեղավան	109500	93500	91000
	Եղվարդ	122500	118600	119200
	Հրազդան	71900	59300	59700
	Ծաղկաձոր	164300	179000	180300
	Չարենցավան	95100	80400	83900
Շիրակ	Գյումրի	109700	108400	104000
	Արթիկ	57200	55300	54800
	Մարալիկ	27400	29200	29600
Սյունիք	Գորիս	113000	127600	127100
	Կապան	95000	106700	107500
	Սիսիան	78500	86200	86800
	Մեղրի	47700	54400	55000
	Ազարակ	29400	32800	32800
	Քաջարան	52000	57100	57700
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	78000	70000	70500
	Եղեգնաձոր	101700	109100	107900
	Զերմուկ	130600	116100	112700
Տավուշ	Դիլիջան	101700	87200	90600
	Իջևան	130500	132000	132400
	Բերդ	39800	42300	42500
	Նոյեմբերյան	30100	33500	33600
	Այրում	21100	24000	24000

2009թ. օգոստոսին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. հուլիսի համեմատ նվազել են 0.3%-ով:

2009թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 340 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 106, մարզերում միասին վերցրած՝ 234: 2009թ. օգոստոսին, 2009թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 9.6%-ով, ընդ որում Երևանում՝ 5.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 14.9%-ով: 2008թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 17.5%-ով, ընդ որում Երևանում աճել է 8.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 25.5%-ով:

2009թ. օգոստոսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	օգոստոս 2008թ.	օգոստոս 2009թ.	հուլիս 2009թ.
Կենտրոն	504700	474400	484000
Արաբկիր	436400	362500	373500
Քանաքեռ Զեյթուն	320700	282000	289700
Նորք Մարաշ	298900	284200	290600
Ավան	284700	237300	241100
Էրեբունի	286900	260300	266500
Շենգավիթ	291000	243700	253300
Դավթաշեն	316000	267100	273300
Աջափնյակ	295400	251900	260700
Մալաթիա-Սեբաստիա	284400	232800	242500
Նուբարաշեն	161700	140500	146700
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>316400</i>	<i>276100</i>	<i>283800</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. օգոստոսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հուլիսի համեմատ նվազել են 2.7%-ով:

2009թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		օգոստոս 2008թ.	օգոստոս 2009թ.	հուլիս 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	144200	137800	133500
	Ապարան	38300	45900	46700
	Թալին	48200	50200	51200
Արարատ	Արտաշատ	108900	89800	92000
	Մասիս	138900	130000	137000
	Վեդի	91300	90600	91100
Արմավիր	Արարատ	66700	88400	90500
	Վաղարշապատ	176400	170500	175000
Արմավիր	Արմավիր	129700	118700	122900
	Սևան	102800	90100	91900
Գեղարքունիք	Գավառ	51600	50200	52700
	Մարտունի	76600	83400	83600
	Վարդենիս	35800	35000	36300

	Ճամբարակ	21000	21400	21700
Լոռի	Վանաձոր	104800	95400	94900
	Ստեփանավան	52700	57000	56700
	Սպիտակ	67000	77100	77400
	Ալավերդի	36100	34200	34900
	Տաշիր	36500	37100	37600
	Թումանյան	10200	10000	10000
	Շամլուղ	7300	7400	7400
	Ախթալա	16000	18200	18200
Կոտայք	Աբովյան	190000	148000	150200
	Նոր Հաճն	138900	135800	139600
	Բյուրեղավան	114700	95500	97500
	Եղվարդ	130300	120600	121600
	Հրազդան	76700	62200	64900
	Ծաղկաձոր	252800	291700	290700
	Չարենցավան	99400	87000	90000
Շիրակ	Գյումրի	110900	111100	110900
	Արթիկ	60700	56800	58000
	Մարալիկ	32200	32100	33200
Սյունիք	Գորիս	120300	129300	129100
	Կապան	97000	111100	113300
	Սիսիան	81200	89000	90800
	Մեղրի	50200	56800	57200
	Ագարակ	32800	35700	35700
	Դաստակերտ	10400	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	80900	72400	73100
	Եղեգնաձոր	104000	112700	111600
	Ջերմուկ	91300	113000	110800
Տավուշ	Դիլիջան	110000	101000	101300
	Իջևան	131800	133600	133800
	Բերդ	41400	43700	44800
	Նոյեմբերյան	35900	34800	35700
	Այրում	23000	25800	25800

2009թ. օգոստոսին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. հուլիսի համեմատ նվազել են 1.2 % -ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. օգոստոսին հանրապետությունում օտարվել են 1173 միավոր /528.84 հա/ հողեր, որից Երևանում՝ 104 միավոր /35.30 հա/, այդ թվում 22 հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 51 միավոր /5.04 հա/ հողեր, որից Երևանում՝ 36 միավոր /0.36 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 453 միավոր /426.98 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /1.59 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 515 միավոր /45.29 հա/, որից Երևանում՝ 85 միավոր /3.16 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 174 միավոր /44.36 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /30.55 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 13 միավոր /8.68 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր /3.32 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.20 հա/ :

2009թ. օգոստոսին հանրապետությունում օտարված հողերից 1050 միավորի /461.42 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 96 միավոր /34.86 հա/, նվիրատվության գործարքներ՝ 111 միավորի /61.51 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /0.44 հա/ և փոխանակության գործարքներ՝ 12 միավորի /5.91 հա/:

Հանրապետությունում 2009թ. օգոստոսին, 2008թ. օգոստոսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 38.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 35.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 40.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 31.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 108.14 հա, որից 95.35 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.0%-ը կամ 284 գործարքներ /84.62 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 38 գործարքներ /0.52 հա/, իսկ 72.9%-ը կամ 765 միավորը /376.67 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 58 միավոր /34.34 հա/:

2009թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք /0.13 հա/:

Ստորև ներկայացվում է 2009թ. օգոստոսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	32	0.37	6	0.15	5	1.59	0	0.00	47	2.51	6	30.24
Արագածոտն	21	18.07	1	5.00	2	0.45	24	0.78	43	45.29	0	0.00	26	2.51	2	0.24
Արարատ	3	4.82	2	0.93	0	0.00	12	0.13	49	53.31	0	0.00	55	4.59	7	0.13
Արմավիր	4	1.66	0	0.00	0	0.00	11	0.13	56	83.39	0	0.00	52	4.98	5	0.08
Գեղարքունիք	1	3.10	1	0.60	10	0.65	8	0.94	8	4.95	0	0.00	11	1.15	0	0.00
Լոռի	8	3.65	1	0.10	3	0.27	5	0.20	29	15.95	0	0.00	106	13.26	3	0.66
Կոտայք	11	18.53	0	0.00	7	0.45	31	1.09	106	76.82	2	0.04	69	6.01	12	4.01
Շիրակ	1	1.57	2	0.20	3	0.21	11	0.82	11	14.60	0	0.00	3	0.13	1	0.03
Սյունիք	5	10.15	2	1.56	1	0.04	7	0.26	9	5.04	1	0.15	3	0.37	2	0.14
Վայոց Ձոր	4	1.33	0	0.00	15	1.12	3	0.02	6	0.68	0	0.00	10	1.35	1	0.002
Տավուշ	0	0.00	1	0.09	8	0.31	9	3.46	1	0.26	0	0.00	6	0.30	3	0.28
Ընդամենը	58	62.88	10	8.48	81	3.87	127	7.98	323	301.89	3	0.19	388	37.16	42	35.81

Ստորև ներկայացվում է 2009թ. օգոստոսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների

քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

Ընդամենը	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր						Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
			Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի										Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	38	0.52	0	0.00	32	0.37	6	0.15	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	47	24.30	21	18.07	1	5.00	2	0.45	23	0.78		
Արարատ	1	0.11	1	0.11	0	0.00	0	0.00	16	5.77	3	4.82	1	0.82	0	0.00	12	0.13		
Արմավիր	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	12	0.67	2	0.55	0	0.00	0	0.00	10	0.12		
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	1	0.003	0	0.00	19	5.29	1	3.10	1	0.60	9	0.65	8	0.94		
Լոռի	4	0.24	0	0.00	2	0.20	2	0.04	13	3.98	8	3.65	1	0.10	1	0.07	3	0.16		
Կոտայք	7	0.59	0	0.00	2	0.09	5	0.50	37	18.73	6	17.78	0	0.00	5	0.36	26	0.59		
Շիրակ	9	0.95	0	0.00	3	0.21	6	0.74	7	0.29	0	0.00	2	0.20	0	0.00	5	0.09		
Սյունիք	1	0.13	0	0.00	0	0.00	1	0.13	14	11.89	5	10.15	2	1.56	1	0.04	6	0.14		
Վայոց Ձոր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	21	2.47	4	1.33	0	0.00	15	1.12	2	0.02		
Տավուշ	5	3.32	0	0.00	4	0.12	1	3.20	13	0.54	0	0.00	1	0.09	4	0.19	8	0.26		
Ընդամենը	69	5.87	1	0.11	44	0.99	24	4.77	199	73.93	50	59.45	9	8.37	37	2.88	103	3.23		

Հանրապետությունում 2009թ. օգոստոսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 8 գործարք /3.42 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. օգոստոսին, 2008թ. օգոստոսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 70.3%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 4 միավորով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 70.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 70.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 85.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 57.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 35.7%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների						Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների												
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/											
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին									

Արագածոտնի մարզ										
Աշտարակ	19	16.57	71.9	822.5	327.4	33	35.94	365.0	12000.0	4351.5
Ապարան	1	1.45	46.4	46.4	46.4	2	1.46	86.5	2727.3	530.3
Թային	1	0.05	38.0	38.0	38.0	6	5.21	93.6	5494.5	468.0
Ծաղկահովիտ						2	2.67	79.5	1000.0	237.5
Արարատի մարզ										
Արտաշատ						25	33.98	335.1	10833.3	2053.9
Մասիս	2	1.82	90.0	94.4	92.2	13	10.67	200.0	11904.8	2920.0
Վեդի	1	3.00	293.3	293.3	293.3	10	8.56	207.0	10795.1	1810.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						24	19.59	294.3	9090.0	1133.5
Բաղրամյան						10	54.51	90.6	2561.1	635.5
Վաղարշապատ	2	0.55	550.0	550.0	550.0	22	9.29	444.4	11764.7	2735.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	444.2
Ճամբարակ						6	3.77	60.5	953.3	237.8
Մարտունի						1	0.19	51.1	2850.0	564.2
Սևան	1	3.10	118.8	118.8	118.8			52.2	2134.8	232.5
Վարդենիս						1	1.00	41.2	2575.1	385.5
Լոռու մարզ										
Այվերդի						12	4.31	170.4	6424.2	985.7
Գուգարք	5	1.75	220.1	405.8	347.6			234.6	6065.9	1072.2
Սյիտակ								250.0	5555.5	580.5
Ստեփանավան	3	1.90	210.4	210.6	210.5	8	7.62	90.6	1686.6	386.6
Տաշիր						9	4.02	45.3	1384.4	200.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	14.50	203.0	206.7	204.8	34	12.89	279.3	11942.7	4780.0
Եղվարդ	2	1.63	275.0	1244.3	759.6	63	59.30	174.4	11971.8	3280.0
Հրազդան	2	1.65	417.5	480.0	448.8	9	4.63	130.5	10256.4	1500.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	3.79	252.0	1693.1	481.5
Ամասիա						2	5.69	40.9	261.0	135.5
Անի						1	1.46	110.6	546.9	278.2
Աշոցք						2	0.90	58.5	215.8	120.5
Արթիկ						2	2.76	79.4	1428.6	232.5
Սյունիքի մարզ										
Գորիս	2	4.10	137.5	137.5	137.5	6	1.96	92.6	1023.2	468.6
Կապան	3	6.05	40.3	306.2	130.1			120.0	841.6	277.5
Մեղրի						1	0.51	193.0	3000.0	585.0
Սիսիան						2	2.58	46.3	1977.4	290.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	1.33	34.4	320.0	193.6	5	0.38	125.0	10000.0	1492.0
Վայք						1	0.30	58.8	1430.7	500.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.26	213.3	3783.8	495.1
Իջևան								267.5	9454.5	1000.0
Նոյեմբերյան								46.7	7368.4	732.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների
---------------------------------------	--	--

	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						20	18088.0	130.7	22200.0	2570.6
Ապարան	2	4472.0	205.2	205.2	205.2	4	5400.0	124.1	609.6	245.0
Թալին						2	1620.0	63.2	1454.8	131.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	76.5
Արարատի մարզ										
Արտաշատ						8	7565.0	173.9	7140.3	892.0
Մալիս						33	22994.0	187.5	25000.0	1220.0
Վեդի						13	13844.0	126.1	5000.0	660.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						11	11700.8	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան								100.0	833.3	172.3
Վաղարշապատ						41	38081.0	197.4	26528.4	1537.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	3680.0	174.2	175.0	174.7	4	3343.0	186.6	1084.3	435.5
Ճամբարակ						1	980.0	71.3	2286.2	125.4
Մարտունի	4	1612.0	113.1	118.3	114.5	2	2250.0	119.3	5000.0	273.0
Սևան	2	1208.0	428.6	428.6	428.6	3	3408.5	240.0	3110.4	210.8
Վարդենիս						1	1519.0	72.5	987.2	143.7
Լոռու մարզ										
Արավերդի	1	695.0	891.0	891.0	891.0	2	2102.0	114.3	1388.9	190.2
Գուգարք						1	873.0	77.9	14083.3	700.0
Սյիտակ						101	128570.0	104.9	1348.3	182.5
Ստեփանավան						2	1100.0	88.2	1666.7	137.6
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	514.0	3166.8	3166.8	3166.8	33	29004.0	264.5	35353.5	2050.4
Եղվարդ						26	19972.0	173.6	27000.0	2720.0
Հրազդան	4	3100.0	393.0	1070.0	662.6	10	11118.0	117.7	34848.5	1350.3
Շիրակի մարզ										
Ախուրյան						2	435.0	113.6	18750.0	330.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի								67.9	180.6	115.2
Աշոցք								40.8	144.0	59.1
Արթիկ						1	840.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	370.0	1150.0	1150.0	1150.0			112.2	1700.0	280.0
Կապան						1	715.0	67.9	2638.9	225.0
Մեղրի						2	3003.0	68.5	632.9	142.4
Միսիան								123.5	875.0	156.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	1400.0	376.2	765.0	570.6	4	6790.0	96.7	7659.6	386.5
Վայք	13	9750.0	854.0	854.0	854.0	6	6750.0	120.7	1448.3	150.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	93.4
Իջևան	3	1900.0	297.0	1428.4	674.1	6	3002.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան	1	24.0	1325.0	1325.0	1325.0			125.0	1948.1	163.0

2009թ. օգոստոսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 0.98 հա մակերեսով, ընդ որում, 8-ը՝ /0.57 հա/ Լոռու և 1-ը՝ /0.41 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 838 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 77.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. օգոստոսին 2009թ. հուլիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 20.8%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ՝ 5.8%-ով:

2009թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 45 բնակարանների, 31 անհատական բնակելի տների, 329 հասարակական, 42 արտադրական նշանակության օբյեկտների, 310 միավոր /1330.97 հա/ հողերի և 81 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. օգոստոսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 11 վարձակալության գործարքների /այդ թվում 6 միավոր՝ 0.08 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. հուլիսի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 57.7%-ով: 2009թ. օգոստոսին հանրապետությունում վարձակալված 1330.97 հա հողերից 0.78 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1330.19 հա հողերի 13.97 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 40.53 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 553.07 հա, որից 505.02 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 39.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. օգոստոսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	2	30.77	11	116.95
Արարատ	0	0.00	64	107.90
Արմավիր	0	0.00	4	61.16
Գեղարքունիք	0	0.00	47	188.95
Լոռի	0	0.00	13	219.27
Կոտայք	0	0.00	3	0.59
Շիրակ	2	9.00	34	496.02
Սյունիք	1	0.02	16	36.05
Վայոց Ձոր	0	0.00	4	1.82
Տավուշ	0	0.00	1	1.65
Ընդամենը	5	39.79	197	1230.36

2009թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1335 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.4%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հուլիսի համեմատ նվազել է 11.6%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ՝ 43.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.1%/, առանձնատների /24.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.6%/ և հողերի /9.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 625 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. հուլիսի համեմատ նվազել է 19.7%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 28.7%-ով:

2009թ. օգոստոսին հանրապետությունում գրավադրվել են 179.77 հա հողեր, որից 32.23 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 69.3%-ը կամ 124.50 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.04 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 55.35 հա, որից 55.01 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. օգոստոսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 88 գործարքներ, որից 62-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 79.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 10.2%-ն՝ անհատական բնակելի տների, 2.3%-ը հասարակական նշանակության օբյեկտների, 4.5%-ը այգետնակների և 3.4%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 3.5%-ով, ընդ որում Երևանում նվազել է 6.1%-ով, մարզերում աճել՝ 36.8%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ նվազել է 48.5%-ով, ընդ որում Երևանում՝ 47.5%-ով, մարզերում՝ 50.9%-ով:

2009թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2009թ. հուլիսի համեմատ ավելացել է 6-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ նվազել է 45.5%-ով: 2009թ. օգոստոսին մասնավորեցման գործարքներից 2-ն արձանագրվել են՝ Արարատի, 1-ական՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում:

2009թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2167 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. հուլիսի համեմատ աճել է 6.0%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 0.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայութ յուն